105. ՀՈՆՁ ԸՆՈՒՂՆԻՆ

Մին ըմբոնե մեր Ավանես ապան, մընգյ էլ ուրան տըսներկու արեկան աղան՝ Զախարը քյեցալ ըն հոնձ անել։ Պատառ վեր հոնձ ըն անում, սուվուծանում ըն, նստում ըն հաց օտել։ Հաՙրը տղան, տղան հաՙրաՙն շատ օտող ըն ընում։

Տղան վեր տեսնում ա հաՙրը մըեծ-մըեծ ա օտում, ինքյն էլ ա մըեծ-մըեծ օտում։

Վերչը վեր մին լաՙվ օտում ըն, տղան ասում ա.— Ա՛պա, տեսնում ը՞ս հինչ լաՙվ կերե՞նքյ, էսքան հաց օտել կինի՞։

Հաՙրըն էլ ասում ա.— Պա դե, յըես մին մըեծ մարթ, ղոչչաղ ասլան, օտող, տու էլ մին մըեծ տղա, ասլան բալասի, ղվաթավ, ինքյըտ էլ օտող։

Սկսում ըն հոնձ անելը։ Հաՙլաՙ մին պատառ հոնձ ընելու, նղանում ըն, տղան ասում ա.— Ա՛պա նըղացալ ըմ, եք դինշաՙնանք։

Նստում ըն, թաՙ դինշանաՙն, եշում ըն, տրեսնում արտան հաՙլաՙ մին թիքյաՙ յըն հընձալ։

— Ա՛պա, բա խե՞ խստի խրեգյ ընք հընձալ։

Հաՙրն ասըմ ա.— Ապան մատաղ, պա դե յըես մին պառավ մարթ, տու մին կուճուր խոխա, հունց շատ հնձի՞նքյ։